

№ 2 յաւելում՝ «Բանկորի կտոր» թերթի

329.15(47)

ՈՎՔԵՐ ԵՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ



1921թ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութ. Ալեք-
սյոյի Գաւառացիին Կոմիտէի

Ո՞վ է ԻՐԱՆԱՅԻ

Ոմանք հայհոյում են կոմունիստներին և նոյն իսկ խօսք չեն գտնում՝ նրանց սևացնելու համար: Կոմունիստները—բռնացողներ են, կողոպտիչներ, աւազակներ: Կոմունիստները նրանք են, որոնք միայն ըզբաղւած են ժողովրդին թալանելով, շարունակ բռնագրաւում են և անվերջ գնդակահարում...

Այդպէս են ասում ոմանք: Իսկ միւսները, ընդհակառակը, համակրում են և օգնում կոմունիստներին, գնում են նրանց դրօշակների ետևից և կամ մտնում կոմունիստական կուսակցութեան շարքերը: Նրանց կարծիքով, կոմունիստները պաշտպանում են աշխատաւորութեան շահերը և ձգտում են ամբողջ մարդկութիւնն ազատել դժբախտութիւններից ու տանջանքներից...

Ո՞վքեր են իրաւացի,—առաջինները թէ՞ երկրորդները. նրանք, որոնք սևացնում են կոմունիստներին, թէ՞ նրանք, որոնք գնում են կոմունիստների դրօշակների ետևից:

Այդ հարցը կը պարզւի, երբ կը բացատրենք, թէ ովքեր են կոմունիստները, ին-



36330 - 1492

չի հաժար են նրանք կուռում և թէ ինչ-
պէս է առաջ եկել կոմունիստական կու-
սակցութիւնը:

ԻՆՉՊԷՍ Է ԱՌԱՋ ԵԿԵՆ ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ:

Մեզնից քսան—երեսուն տարի առաջ
Ռուսաստանը ցարական ինքնակալութեան
ռեժիմի տակ սարսափելի, զարհուրելի տա-
րիներ էր ապրում:

Գիւղացիներին և զինւորներին սոսկա-
լի կերպով ծեծում էին: Ժողովրդի աշխա-
տաւոր մասը շատ նահանգներում ուղղակի
մեռնում էր բաղցից, խօլերայից և ցարի
ծառանների անխիղճ վերաբերմունքից:

Քաղաքի բանւորները ուղղակի խեղ-
տւած էին. նրանք փոքր հասակից ամենա-
չնչին վարձով աշխատում էին խաւար ար-
հեստանոցներում—օրեկան 10, 14 և նոյն
խիստ 18 ժամ...

Աքսորատեղերն ու բանտերը, ուղղիչ
գումարտակները (խալափառների բատալի-
ոնները) և տաժանակիր աշխատանքի վա-
րերը լցւած էին առաջագէտ, գիտակից
բանւորներով և գիւղացիներով:

Բայց քաղաքային բանւորները կու-
ճանապարհը բռնել էին դեռ 1898 թ., այ-
սինքն՝ մեզնից 23 տարի առաջ. այդ թւին
նրանք կազմեցին իրենց Բանւորական կու-

սակցութիւնը, որը կոչեցին սօցիալ-դեմօկրա-
տիական: Ռուսաստանի պրօլետարիատը
(բանւորական դասը) այդ կուսակցութեան
ղեկավարութեամբ սկսեց իր դժւար, բայց
անխուսափելի կռիւը ցարի ինքնակալու-
թեան, ազնւականների և կապիտալիստնե-
րի դէմ:

ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԲՕՆՇԵԻԿ

Սակայն բանւորական կուսակցութեան
մէջ մտան նաև շատ բուրժուական ինտե-
լիգենտներ, այսինքն՝ կրթւած մարզիկ: Թէև
նրանցից շատերը ժողովրդի միջից են դուրս
եկել և ցարական իշխանութեան ներքոյ
նրանք ևս լաւ չէին ապրում, բայց և այն-
պէս իրենց պարապմունքով և վարած կեան-
քով նրանք աւելի մօտ էին կանգնած բուր-
ժուազիային, քան թէ բանւորներին:

Նրանք վախենում էին յեղափոխական
շարժման աւելի լայն տարածումից և աշ-
խատում էին աննշան յաղթանակներով և
զիջումներով հաշտեցնել բանւորներին կա-
պիտալիստների հետ, յեղափոխականներին՝
ցարական իշխանութեան հետ:

Ահա թէ ինչու, 1903 թ. արտասահ-
մանեան համագումարում անհամաձայն-
քիւն առաջ եկաւ և կուսակցութիւնը բա-
ժանւեց երկու մասի—յեղափոխական մե-
ծամասնութեան և հաշտուող ու զիջող փոք-

բամանութեան: Այդ օրից, կուսակցութեան յեղափոխական մեծամասնութիւնը, որոնց ետեւից գնում էին մեծ մասամբ գիտակից բանուորները, սկսեցին կոչել «բօլշեւիկներ» (մեծամասնականներ): Իսկ հաջորդ փոփոխականութիւնը, որոնց ետեւից գնում էին զլխաւորապէս ինքնիշխանները եւ յետամնաց բանուորները, — կոչեցին «մենշեւիկներ» (փոքրամասնականներ):

Մինչև այդ համագումարը, բօլշեւիկները վիճում եւ կռւում էին կուլակների կուսակութեան՝ այսպէս կոչւած «սոցիալիստ յեղափոխականների» հետ. իսկ այժմ ներանք ստիպւած են կռւել նաև ինտելիգենտների ու քաղբենիների (մէջշանների) կուսակցութեան՝ «մենշեւիկների» հետ:

Աշխատաւորութեան խոշոր մեծամասնութիւնն այդ ժամանակ բօլշեւիկների մասին ոչինչ չը գիտէր: Բանւորութեան նոյն իսկ լայն խաւերը լիովին չէին փստահանում բօլշեւիկներին և յաճախ համակրում էին նրանց հակառակորդներին:

Եւ պէտք էր ապրել ևս տասը սև տարիներ ցարական ինքնակալութեան ուժի մի տակ և վերապրել սարսափելի, արիւնալից աւաղակային պատերազմի՝ սպանդանոցի երեք և կէս տարիները, որպէս զի մեր ամբողջ երկրի աշխատողները վերջապէս հասկանալին, որ իրենց ազատագրական կռում միակ անպարտելի եւ ղեկավարը հարող է յինքն միմիայն բօլշեւիկների (մեծամասնականների) կուսակցութիւնը:

ԲՕԼՇԵՒԻԿՆԵՐՆ ԻՆՉՈ՞Վ ՉԵՌՔ ԲԵՐԻՆ ԱՇԽԱՏԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՅՐԱՆՔԸ.

Այժմ ամենքը գիտեն, թէ ի՞նչ է Խորհրդային իշխանութիւնը: Այդ աշխատաւորների իշխանութիւնն է, որովհետև խորհրդային հասարակապետութեան մէջ, պետական բոլոր օրգաններում ընտրութիւնների մէջ մասնակցում են միայն նրանք, որոնք ապրում են իրենց և ոչ թէ ուրիշի աշխատանքով:

Իսկ ո՞վ է իր զբօշակի վրայ գրել՝ «Ամբողջ իշխանութիւնը խորհուրդներին» նշանաբանը:

Այդ նշանաբանը 1917 թ. ապրիլ ամսին հռչակեց բօլշեւիկների (մեծամասնականների) կուսակցութիւնը՝ Լենինի գլխաւորութեամբ:

Այդ ժամանակ բուրժուական բոլոր կուսակցութիւնները, զրանց թւում մենշեւիկներն ու էսէրները («սոցիալիստ-յեղափոխականները») այդ նշանաբանի դէմ վայնասուն բարձրացրին, իսկ բօլշեւիկները, ընդհակառակը, շարունակեցին զրա շուրջը համախմբել բանւորների, զինւորների և զիւզացիների լայն մասսաներ:

Ահա արդէն երկու տարի է, որ աշխատական և հողատրական կալւածատէրերից խլած եւ հողերը՝ յօգուտ բոլոր աշխատաւորների:

Ո՞վ հռչակեց և կեանք մտցրեց այս

ռազմական նշանաբանը՝ «բոլոր հողը աշխատանքի է»:

Մինչ այդ՝ շատ կուսակցութիւններ էին կոկորդիլոսի արցունքներ թափում ու խօսում հողը գիւղացիների միջև բաժանելու անհրաժեշտութեան մասին: Բայց միայն բոլշևիկների կուսակցութիւնն էր, որը ոչ թէ խօսքով, այլ գործով կեանք մտցրեց այդ նշանաբանը:

Զանազան կուսակցութիւններ (մենշևիկները և էսէրները) ողբում էին ցարի սարքած պատերազմը, բայց հէնց իրենք ազա՛ն «սօխնիկների» (հաշնակիցների) հետ բարեկամական սերտ կապեր հաստատեցին և դրանով աջակցեցին, որ պատերազմը շարունակւի: Եւ միայն Բոլշևիկներն էին, որոնք ոչ թէ խօսքով, այլ գործով վերջ տաին աւազակային պատերազմին, որին ցարը և սօխնիկները մասնակից արին Ռուսաստանի բանւորներին ու գիւղացիներին՝ յօգուտ կալւածատէրերի և կապիտալիստների:

Գիւղացիների ու բանւորների մէջքին ծանրացան պետական ծանր հարկեր, որոնք պատերազմից յետոյ կը խեղդէին աշխատաւորութեանը: Այդ պարտքերը արել էր ցարը և յետոյ Կերենսկին աւելացրել:

Արտասնմանն անհաշիւ թանկարժեքի հաշիւներից ո՛վ ջնջեց այդ պատքերը: Կրկին Բոլշևիկները կուսակցութիւնը:

Բանկիրներից ով խլեց բանկերը, խոշոր տնտեսներից՝ տները, կապիտալիստները:

Իրից — գործարանները, գաւօղները, հանքերը: Այդ բոլորը ով խլեց տպուկներից և դատարկապօրտներից ու վերադարձեց աշխատանքի: Կրկին Բոլշևիկները:

Այս բոլորը արեց 1917 թ. հոկտեմբերեան մեծ յեղափոխութիւնը, իսկ այդ յեղափոխութիւնը ղեկավարում էր Բոլշևիկները կուսակցութիւնը:

Հոկտեմբերեան յեղափոխութեան հսկայական ալիքները հիմքից ցնցեցին ամբողջ աշխարհը, — անգործների և կուշտ դատարկապօրտների աշխարհը, խաբէութեան ու ստի աշխարհը, աշխատաւորութեանը ճնշող և նրա վրայ բռնացող աշխարհը:

Յեղափոխութեան կայծակները լուսաւորեցին դարաւոր ստրուկների միտքը և կուլի բոցերում աշխատաւորութեան սրտերը ջերմ համակրանքով կապեցին բոլշևիկների կուսակցութեան հետ:

ԲՕԼՇԵՒԻԿՆԵՐԸ ԵՒ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ —
ՄԻԵՒԵՆՈՅՆ ՄԱՐՊԻԿՆ ԵՆ:

— Այդ բոլորը լաւ, — ասում են ոմանք, — բայց չէ՞ որ բոլշևիկներն ուրիշ մարդիկ են, կոմունիստները՝ ուրիշ: Մենք համակրում ենք բոլշևիկներին, իսկ կոմունիստներին տանել չենք կարող:

Ընկերներ! Յայտնե՛ք կամ տխուր թիւրիմացութիւն է, կամ որևէ կեղտոտ սրիկալի հնարած բան:

Կոմունիստները — նոյն բոլշևիկներն են, իսկ բոլշևիկները — նոյն կոմունիստներն են:

Ի՞նչպէս թէ: Շատ պարզ: 1918 թ.ի գարնանը տեղի ունեցաւ բոլշևիկների համագումարը և վճռեցին սօցիալ-դեմոկրատ բոլշևիկների կոսսակցութիւնը այսուհետեւ անվանել կոմունիստական:

Փոխւած է, ուրեմն, միայն անունը: Ինչո՞ւ են այդպէս արել: Նրա համար, որպէսզի յեղափոխութեան կոսսակցութիւնը չը շփոթեն ուրիշ բոլոր «սօցիալիստների» և «սօցիալ-դեմոկրատների» հետ, որոնք խօսքով բարբանջում են յեղափոխութեան մասին, իսկ գործով՝ նրա դեմ էն դուրս գալիս:

Ի՞նչ է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԿՈՄՈՒՆԻՍՏ».

Կոմունիստը նոյնն է, ինչ որ սօցիալիստը, կօլեկտիվիստը, կամ, աւելի պարզ առած, հասարակութեան բարեկեցութեան մասին հոգացող մարդը:

Ե՞րբ յայտնի եղաւ այդ հասկացողութիւնը:

Շատ վաղուց, բայց «կոմունիստ» խօսքը առանձնապէս հռչակ ստացաւ մեզնից 70 տարի առաջ, երբ բանւորները մեծ ուսուցիչները — Մարքս և Էնգելս — լոյս ընծայեցին իրենց յայտնի «Կոմունիստական Մանիֆեստը» (1848 թ.):

Այդ «Մանիֆեստում» Մարքս և Էնգելս կոչ արեցին բոլոր երկրների բանւորներին՝ սերտ միանալու և անդադրուն կռիւ մղելու կապիտալիստների դէմ: Եւ հէնց այդ զբոլմ առաջին անգամ բարձրաձայն հրնչեց հին աշխարհի անեղ մահազանգը:

Մարքսի և Էնգելսի ժամանակակից յեղափոխականներն ևս իրենց կոմունիստներ էին անւանում: Այժմ լիովին հասկանալի է, թէ ինչո՞ւ բոլշևիկների կոսսակցութիւնն իր առաջւայ անունը փոխեց և աւելի ուղիղ ու յեղափոխական անունով կոչւեց, այն է՝ «Կոմունիստական կոսսակցութիւն»:

Եւ այդպէս, ռիքեր են կոմունիստները:

Կոմունիստները — Ռուսաստանում այն կոսսակցութիւնն է, որը ղեկավարել է և ղեկավարում է բանւորա-զինղացիական մեծ յեղափոխութիւնը, իսկ այդ յեղափոխութիւնը աշխատաւորութեանը մեծ յաղթանակներ պարգևեց և ազատ աշխատանքի համար ամուր հիմք դրեց:

Կոմունիստները — Հակառակորդներն են իմպերիալիստական պատերազմների, այսինքն՝ աւազագային պատերազմների, որոնք մղւում են կապիտալիստների և կալւածատէրերի օգտի համար:

Կոմունիստները — կողմնակիցներն ու ղեկավարներն են քաղաքացիական պատերազմների, որոնք մղւում են ոչ թէ պ. պ. կապիտալիստների և կալւածատէրերի զւարճութեան

համար, այլ նրանց ղէմ և աշխատաւորութեան ինքնապաշտպանութեան համար, բանւորների և զիւղացիների ձեռք բերած յաղթանակներն ամրապնդելու համար:

Վերջապէս կոմունիստները, — այդ այն կուսակցութիւնն է, որը կոչ է անում բոլոր երկրների պրօլետարներին և աշխատաւորներին եղբայրօրէն սերտ համախմբելու կոմունիստական ինտերնացիօնալի, այսինքն՝ բանւորների միջազգային միութեան մէջ:

Այդպիսի միութիւն արդէն հիմնւած է 1919 թ. մարտին Մոսկւայի համագումարում: Նրան միացան Ռուսաստանի, Գերմանիայի, Վենգրիայի, Աւստրիայի, Ամերիկայի, Շվեյցարիայի, Նորվեգիայի, Իտալիայի, Շվեդարիայի, Բուլղարիայի, Ռումինիայի, Հոլլանդիայի բանւորական կուսակցութիւնները, նոյնպէս առանձին կոմունիստական կազմակերպութիւններ Անգլիայում, Ֆրանսայում և ուրիշ երկրներում: Այդ կուսակցութիւններն ևս հիմա կոչւում են կոմունիստական:

Բոլոր երկրների աշխատաւորները կօմունիստական միութեան մէջ համախմբւելով միայն՝ կարող կը լինեն ազատւելու ստրկութեան լծից և ընդմիշտ խորտակելու կապիտալի զանք:

Միայն այն ժամանակ չեն լինի ազգամիջեան կռիւներ, միայն այն ժամանակ

մարդիկ կը դադարեն միմիանց շահագործելուց. այլևս վերջ կը տրւի պօրտաբոյծների ծովութեանն ու ձրիակերութեանը, նոյնպէս և աշխատաւորի ուժից վեր աշխատանքին:

Բոլորի համար կը սահմանւեն հաւասար խաղաղ աշխատանք և ամեն մարդ իրաւունք կունենայ միակերպ հանգիստ վայելիլու:

Ահա թէ ովքեր են կոմունիստները:

Ահա թէ ինչի համար են նրանք կոչւում և ինչի համար են կոչ անում:

Ո՞վքեր են ՄՏՆՈՒՄ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ:

Այդ կազմակերպութեան շարքերն են մանում քիչ-շատ զիտակից, առաջադէմ, վճռողական բանւորներն ու արքաւոր զիւղացիները:

Ո՞վքեր են համակրում կոմունիստներին:

Աշխատաւորներից նրանք, որոնք հասկանում են, որ ազատութեան համար մղւող իրենց կռիւը անխուսափելի է և ուղիղ:

ՈՎԻԲԵՐ ԴԷՄ ԵՆ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻՆ

Ուրեմն էլ ովքեր են ատոււմ կոմունիստներին: ՈՎԻԲԵՐ են նրանց հայհոյում և ովքեր են նրանց մասին ամեն տեսակ բամբասանքներ տարածում:

Դրանք հէնց ժողովրդի դահիճներն ու ազրուկներն են, որոնց հետ կոմունիստները կուռում են, դրանք են՝ գահրնկէց թագաւորները, վաւդաւ չինովնիկները, ժողովրդական հողերից դուրս արւած կալւածատէրերը, իրենց հարստութիւնը կորցրած կապիտալիստները: Այդ ամբողջ ոււադակախմբին սրտագին աջակցում են կուլակները, որոնց կոմունիստները թոյլ չեն տալիս առաջւայ պէս ժողովրդին կողոպտել, աշկարայ սուտ խօսող տէրտէրներն ու վարդապետները, որոնցից նոյնպէս խլւած են նրանց հողերը և կապիտալները, նաեւ ինտելիգենտները, վաճառող գիտնականները և բուրժուական բանակից դուրս եկած անամօթ գրչակները:

ՄՏԷՔ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՁ:

Մարդկութիւնը բաժանւեց երկու անհաշտ և միմիանց թշնամի բանակների—ազահ ճրիակներների և ազատագրւող ստրուկների:

Կոմունիստները միշտ եղել են և մինչև վերջ կը լինեն նրանց հետ, որոնք ամբողջ դարեր ստիպւած են եղել աշխատել ծոյլերի համար, իսկ այժմ զէնքը ձեռքին դուրս են եկել կուռելու և իրենց լիովին ազատագրելու:

Ընկերներ! Շտապեցէք ըմբռնել այս տարրական ճշմարտութիւնները: Իսկ նրանք, ովքեր այդ հասկացել և իրանց մտքի ու սրտի ամողջ խորութեամբ ըմբռնել են, պէտք է անհապաղ մտնեն աշխատանքի փառաւոր, ամենակարող, ազատարար կոմունիստական կուսակցութեան դրօշակի տակ:

Ստացնելով այդ կուսակցութեան շարքերը գիտակից, զիմացկուն կուռղներով, դուք ձեռք կը բերէք ճշմարիտ, շուտափոյթ և վերջնական յաղթանակ:

Շարադրութիւն Ս. Կ. ՄԻՆԻՆԻ

Ռուս, թարգմ. Ա.ԲԻՍԴՍ.



27

Handwritten text in Armenian script, likely a manuscript or letter. The text is written in a cursive style and is somewhat faded. It appears to be a single paragraph or a short section of a longer document.



ՀՀ Ազգային գրադարան



NL1209978

492

36330